

ԺԱՄԱՅՈՅՅԻՆ ՍԼԱՔՆԵՐԸ ՄԵՎ ԺԱՄ ԵՏ ՏԱՆԻԼ

Համաձայն Նախարարաց խորհուրդի որոշումին, հոկտեմբեր 24-ին 25 լուսնոյ գիշերուան ընթացքին Լիբանանի մէջ պիտի սկսի գործադրուիլ ձմեռային ժամանակացոյցը: Հետեալը, պետք է ժամացոյցին պաշտօնը մէկ ժամ ետ տանի:

1500 Լ.Ո. 94-ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 183 (26455) ՇԱՐԱՄ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020 4 ԷՁ

ՌՈՒՅԱՆԻ ԷՐՏՈՂԱՆԻ ԿՈՉ ԿՈՒՐՂԵ՛

ՂԱՐԱԲԱՐԵԱՆ ՏԱԳՆԱԳԻ ԵՄԵՋ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀՈՒՆԿՈՑԹԻ ՎԵՐԱԿԱՆՁՆԱԿՆԱԿԱՆ ԱՅՈՒՆԵՐԸ

Իրանի Նախագահի Հասան Ռուհանի իր թորք պաշտօնակից Ռեհեմի Թախի Էրտողանի հետ հեռաձայնային զրոյցի ընթացքին նշած է, որ հայ-ազրպէյճանական տագնապը զինուորական լուծում չունի, այլ իրավիճակը պետք է լուծուի երկխօսութեան եւ բանակցութիւններու միջոցով:

Իրանեան «Թասնիմիուզ» կայքին համաձայն, իրանեան կողմը ընդգծած է տագնապի գոտիին մօտ գտնուող իրանեան պետութեան սահմաններու անվտանգութեան ապահովման անհրաժեշտութիւնը:

Ռուհանի ընդգծած է, որ Թեհրան ու Անգարան՝ իբրեւ շրջանային հզօր երկիրներ, կրնան իրենց ուժերը համատեղել եւ, Ռուսիոյ հետ համագործակցութեամբ, օգնել շրջանային խաղաղութեան ու անվտանգութեան վերականգնման:

ՀԱՐԻՐԻԻ ԿԱՏԱՐԱԾ ՈՉ ՊԱՐՏԱԳԻՐ ԽՈՐՀՐԳԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՀԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅԱԿ ԱՄԵՆԷՆ ԱՐԱԳ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅԻՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԿՍԵԼՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ

Վարչապետ Սաատ Հարիրի երէկ կէսօրէ ետք ժամը 1:30-ին մինչեւ երեկոյեան ժամը 6:00 խորհրդարանին մէջ երեսփոխանական պլոքներուն եւ անհատ երեսփոխաններուն հետ կատարեց կառավարութեան կազմութեան ոչ պարտադիր խորհրդակցութիւններ:

Անոնց աւարտին Հարիրի խորհրդարանէն կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ ընդգծեց, թէ պիտի կազմէ մասնագետներէ բաղկացած կառավարութիւն մը, որ պիտի գործէ ըստ ֆրանսական նախաձեռնութեան բովանդակած բարեկարգումներուն իրագործման:

Հարիրի նշեց, որ կառավարութիւնը վեց ամսուան ժամանակաշրջանի մը կարիք ունի՝ հասնելու համար իր նպատակին, «իսկ ֆրանսական նախաձեռնութեան ճշդած բարեկարգումներն ոչ մէկ ձեւով պիտի շեղուի»: Պետք է ճշդել նպատակները եւ աշխատիլ անոնց գործադրութեան ի խնդիր», հաստատեց ան:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ ԳԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՒԺՈՒԹԵԱՆ ԶՈՒԳԱՀԵՈՒ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՌՄԲԱԿՈՇՈՒՄ



Երէկ՝ ուրբաթ, 23 հոկտեմբեր 2020-ին Արցախեան տագնապը ունեցաւ թէ՛ ռազմական եւ թէ՛ դիւանագիտական աշխուժութիւնը: Թէեւ Հայաստանի պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան իր հերթական մամուլի ասուլիսին ընթացքին ըսաւ, որ Արցախի վրայ Ազրպէյճանի սանձազերծած լայնածաւալ պատերազմի առաջին օրերուն հետ բաղդատելով շփման գիծին մէջ կրակի խտութիւնը նուազած է, սակայն, մտատուրապէս նոյն ժամերուն՝ երեկոյեան, Արցախի Նախագահի մամուլի բանբեր Վահրամ Պողոսեան յայտարարեց, որ Ազրպէյճանի զինուած ուժերը հրթիռակոծած են Ստեփանակերտը եւ ան Պիմատերի իր էջով նշեց, թէ Արցախի պաշտպանութեան բանակը շատ շուտով պիտի տայ իրթիռակոծման պատասխանը:

Իսկ Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցած Հայաստանի արտաքին գործոց Նախարար Չոհրապ Մնացականեանի դիւանագիտական հանդիպում:

Երէն առաջ, Արցախի Նախագահ Արայիկ Տարրուբեան բաց նամակ յղեց Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինին:

Միւս կողմէ Հայաստանի Նախագահ Արմէն Սարգսեան 22 հոկտեմբերին Ֆրանսայի մէջ Նախագահ Էմանուէլ Մաքրոնին հետ ունեցաւ հասնական, որուն ընթացքին քննարկուեցան Լեռնային Ղարաբաղի տագնապը: Նոյն ընթացքին, Ֆրանսայի Նախագահը հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ Ազրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւին հետ:

ԱՐՄԱԿ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ՝ ՌՈՒՍԻՈՅ ՆԱԽԱԿԱՑ ՓՈՒԹԻՒՆԻՆ

Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Տարրուբեանը յիմեց Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինին՝ անկէ խնդրելով գործադրել բոլոր կարելի շանքերը ազրպէյճանական:

Շար.ը՝ էջ 4

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ ՄԱԿ-Ի ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՒՆ ԱՌՁԵԻ

Կազմակերպութեամբ Լիբանանի հայկական ուսանողական-երիտասարդական միութիւններու, ուրբաթ, 23 հոկտեմբեր 2020-ին տեղի ունեցաւ բողոքի ցոյց՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) Պէյրութի կեդրոնատեղիին առջեւ՝ նպատակ ունենալով լիբանանահայ երիտասարդութեան եւ ուսանողութեան բողոքի ձայնը հասցնել՝ Արցախի խաղաղ բնակչութեան դէմ Ազրպէյճանի գործած վարագ աջբերումն եւ միջազգային օրէնքի դրժումներուն գծով:

Բողոքի ցոյցին ընթացքին մասնակից երիտասարդներն ու ուսանողները հանդէս եկան կանչերով, դատապարտումի եւ Արցախի հայ ժողովուրդին գորակցութեան լուրջնակներով: Մասնակիցներու անուով ընթերցուեցաւ Ազրպէյճանի դէմ դատապարտումի միացեալ խօսք երեք լեզուներով՝ արաբերէն,



Շար.ը՝ էջ 4

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԾՈՎ ԴԻՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՒԺՈՒԹԻՒՆ

ԹՐԱՄՓ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՂԱՐԱԲԱՐԵԱՆ ՏԱԳՆԱԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ ՅԱՌԱՋԵՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի յայտարարած է Լեռնային Ղարաբաղի տագնապին վերաբերեալ բանակցութիւններուն մէջ շատ լայն առաջընթացի մասին: «Արմենիա» կը հաղորդէ, որ Թրամի այս մասին յայտնած է լրագրողներու հետ զրոյցին ընթացքին:

«Մենք կը խօսինք այդ



Շար.ը՝ էջ 4

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԷՁ ՀԱՅԵՐՈՒ ՆԿԱՏԱՍԱՐ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԽՕՍԸ ԵՒ ՍՊԱՌՆԱԼԻԶՄԵՐ, ՆԱԵ՛՛ ԿԱՐՈ ՓԱՅԼԱՆԻ ՀԱՍՅԵԻՆ

Թուրքիոյ մէջ ատելութեան խօսքն ու հայերու նկատմամբ սպառնալիքները աշխուժացած են Արցախի եւ Հայաստանի վրայ Ազրպէյճանի սանձազերծած ռազմական գործողութիւններու լոյսին տակ:

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատ-

գամաւոր Կարօ Փայլան թրքական «Տուվարի»-ին տուած հարցազրոյցին ընթացքին ընդգծեց, որ Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը երկրին մէջ ստեղծած է «ատելութեան սովորական մթնոլորտ»:

Շար.ը՝ էջ 4

«ՓՈՒԹԻՆ ԱՄԵՆ ԲԱՆ Կ'ԸՆԷ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՒ ՂԱՐԱԲԱՐԵԱՆ ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԽԱՂԱՂ ՀՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Կ'ԸՆԷ ՓԵՏՔՈՎ

Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին ամէն բան կ'ընէ Լեռնային Ղարաբաղի մէջ պատերազմը դադարեցնելու եւ տագնապի լուծումը խաղաղ հուն տեղափոխելու համար: ԹԱՍՍ կը հաղորդէ, որ այս մասին լրագրողներուն ըսած է Ռուսիոյ Նախագահի մամուլի քարտուղար Տիլկորի Փետրով:

«Նախագահ Փութին ըսած է, որ ամէնորայն հաղորդակցութեան մէջ է թէ՛ Ալիեւի, թէ՛ Փաշինեանի հետ: Ես կրնամ միայն անգամ մը եւս կրկնել, որ Ռուսիոյ ղեկավարը կարելի ամէն բան կ'ընէ պատերազմը դադարեցնելու եւ ղարաբաղեան տագնապի լուծումը խաղաղ հուն տեղափոխելու համար», ըսած է Փետրով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՊԱՐԱՏԱՏԿԱՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՑ ՆՈՐ ԿԱԶՄՈՒԵԼԻՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ ՍԱՆՁՆԵԼՈՒ»

ՇԵՇՏԵՑ Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՀՀԳ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ երեսփոխաններ Յակոբ Թերզեան եւ Ալեքսանտր Մաքրոնեան հանդիպում ունեցան վարչապետ Սաատ Հարիրիի հետ՝ կառավարութեան կազմութեան ոչ պարտադիր երեսփոխանական խորհրդակցութիւններու շրջագիծին մէջ:

Հանդիպումէն ետք Յ. Բագրատունի անհրաժեշտ նկատելու տուաւ, թէ կառավարութիւնը ամէնէն կարճ ժամանակամիջոցին կազմուի՝ հաստատելով, որ երկար սպասելու ճիշտութեան մէջ չենք գտնուիր:

«Ինչպէս նախանցեալ օր Նախագահական պալատէն յայտարարած էին, մեր մաղթանքն է, որ վարչապետ Սաատ Հարիրի արդիւնաւետ երկխօսութիւն մը կատարէ քաղաքական ուժերուն եւ երեսփոխանական պլոքներուն հետ, ինչպէս նաեւ հանրապետութեան Նախագահին հետ գործակցի՝ իրականացնելու համար Ֆրանսայի

Շար.ը՝ էջ 4

Հարիրի անհրաժեշտ նկատեց բոլորին միջեւ համագործակցութիւնը եւ դրական մտտեցումը՝ կարենալ վերականգնելու համար վստահութիւնը թէ՛ քաղաքացիին եւ պետութեան միջեւ, եւ թէ՛ պետութեան եւ Միջազգային ընտանիքին:

Հարիրի խորհրդակցութիւնները սկսաւ հանդիպում ունենալով խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրիի հետ:

Ապա ան ընդունեց Նախկին վարչապետ Նեժիպ Միքայէլի, որ կոչ ուղղեց կազմելու մասնագետներու կառավարութիւն մը՝ անհրաժեշտ նկատելով, որ կառավարութեան կազմը ըլլայ ներդաշնակ կարենալ դիմադրելու համար առկայ մարտահրաւերներուն:

Նախկին վարչապետ Թամմաժ Սալամ Հարիրիի հետ խորհրդակցելէ ետք կոչ ուղղեց՝ կազմելու փորձութեան կառավարութիւն մը, որ հարկ եղած բարեկարգումներուն գործադրութեան կը ձեռնարկէ:

Շար.ը՝ էջ 2

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՄԱՐՍԻՆ ԿԱՍԸ

ՄԱԿ-Ի ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

«ՄԱԿԹԵՆՔ, ՈՐ ՄԱԿ ԿԸ ՄՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՎՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՂԸ» ԸՆԵՏԵՑ ՆԱԽԱԳԱՅ ՆՈՒՆ

Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երկն հեռագիր մը յղեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կոլտերեսի՝ շնորհաւորելով ՄԱԿ-ի օրը:

Այս առիթով նախագահ Աուն մարտնչեց, որ ՄԱԿ կը մնայ ժողովուրդներու միջեւ խաղաղութիւնը եւ միջազգային արժեքները հովանաւորողը, ինչպէս նաեւ արդարութեան եւ հասարակութեան հսկողը:

Նախագահ Աուն հաստատեց, որ Լիբանան բարձր կը գնահատէ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին պատասխանատուութիւնն ու Լիբանանի ու լիբանանցիներուն նկատմամբ անոր կեցուածքները՝ այս առիթով բարեմտութիւններ փոխանցելով անոր:

Միւս կողմէ, նախագահ Աուն յոյս յայտնեց, որ իր պահանջով տրամադրուած 100 միլիարդ լ. ոսկիի գումարը որոշ չափով նպաստած էր Պեյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած բնակարաններու վնասները հատուցելու: Ան շեշտեց, որ ինք պիտի ջանար նաեւ իբրեւ յատկացում՝ 150 միլիարդ լ. ոսկիի գումար մը եւս պահանջել, որպէսզ բնակարաններու շինարարութիւնը շարունակուի:

ՄԱՅՔ ՓՈՍՓՔՕ. «ԱՅՍ ԱՐԱՐԸ ԿԸ ՓԱՍՏԷ ՄՆԱՅՈՒՆ ԿԵՐՊՈՎ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԶԸՉՊԱԼԼԱՅԻ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ»

Պեյրութի մէջ ամերիկեան ծովուծի կեդրոնատեղիին ղեմ գործուած անձնասպանական գործողութեան 37-րդ յիշատակին առիթով, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմպեօ երկն յայտնեց, որ խաղաղապահ առաքելութեամբ Պեյրութ ժամանած այդ ուժերուն ղեմ շրջապայլա գործած էր յարձակումը՝ սպանելով ամերիկեան ծովուծի 241 անդամներ:

«Մենք բնաւ պիտի չմոռնանք ամերիկեան ծովուծի նահատակ անդամներուն գոհողութիւնները եւ խաղաղարար նպատակները: Այս արարքը կը փաստէ մայրուն կերպով յարձակում գործելու շրջապայլա յանձնառութիւնը», ըսաւ Փոմպեօ:

Ան անցուց, որ ահաբեկչական այս գործողութիւնները կը բացայայտեն նման արարքներ հովանաւորելու Իրանի դիմակը:

«Այսօր մենք կը մեծարենք մեր նահատակները եւ կը վերանորոգենք մեր յանձնառութիւնը՝ արգիլելու համար Լիբանանի մէջ կամ այլուր շրջապայլա յի կողմէ գործուելիք յարիւսահեղութիւններ», ըսաւ ան:

Ան շնորհակալութիւն յայտնեց շրջապայլան ահաբեկչական կազմակերպութիւն նկատող բոլոր երկիրներուն:

Նշենք, որ շրջապայլաի ղեմ պայքարելու նպատակով Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը երկն հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ նշեց, որ «Ռիուորտ ֆոր ճաչթի» ծրագիրով 5 միլիոն տոլար նիւթական պարգեւ ճշդած են անոր, որ կը կարենայ շրջապայլաի անդամ Ֆուատ Շքըրի մասին տեղեկութիւններ ներկայացնել, ինչպէս նաեւ 10 միլիոն տոլար նիւթական պարգեւ՝ անոր, որ կարենայ շրջապայլաի անդամ Սոհամետ Պազալի մասին տեղեկութիւններ տալ:

ՀԱՄԱՆՈՀՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅԱԻ ԱՄԵՆԷՆ ԱՐԱԳ...

Շարունակուած Ա. Էջն

Սալամ ընդգծեց, որ ինք համոզուած է, թէ Հարիրիի գործակցելով հանրապետության նախագահ զոր. Միշել Աունի եւ Պըրիի հետ, կրնայ շատ բան իրագործել, յատկապէս՝ երկրին քայքայումը կասեցնել:



Խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի Հարիրիի հետ հանդիպելէ ետք ընդգծեց, որ պահանջուածը մասնագետներու կառավարութիւն մըն է՝ աւելցնելով, որ նախարարաց խորհուրդին մէջ համագործակցութեան մթնոլորտը կարեւոր է ու անհրաժեշտ:

Ազատագրում եւ բարգաւաճում պլոքին անուկով երեսփոխան Անուար հալիլ կոչ ուղղեց՝ արագացնելու կառավարութեան կազմութիւնը: Ան պահանջեց, որ կառավարութիւնը ըլլայ մասնագետներու կառավարութիւն մը եւ անոր հիմնական աշխատանքը ըլլայ բարեկարգումներու գործադրութիւնը:

Հարիրի ընդունեց նաեւ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան պլոքը՝ կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Շըպարան Պասիլի գլխաւորութեամբ:

Հանդիպումէն ետք Պասիլի հաստատեց, որ Հարիրիի հետ անձնական հարցեր չկան՝ անցնելով, թէ իրենք առաւելագոյն չափով դրական տրամադրուած են, եւ իրենց նպատակն է գործարդել ֆրանսական նախաձեռնութեան պարփակած բարեկարգումներու ծրագիրը:

«Մեր իրաւունքն է մտահոգուիլ, սակայն պատրաստ ենք ամբողջական գործակցութեան եւ երկրին քանդումի կասեցման նպատակով գործելու, որպէսզ այս բարդ ու դժուար փուլը շքրջանցենք: Մենք ոչ մէկ պահանջ ներկայացուցած ենք եւ կամ պայման ճշդած, բացի անկէ, նախարարներու նշանակման մէկ չափանիշ որդեգրուի», ըսաւ ան:

Պասիլի կոչ ուղղեց՝ կազմելու մասնագետներէ բաղադրուած անձնաւորութիւններէ բաղկացած կառավարութիւն մը, որուն մէջ նախարարները պէտք է համապատասխան կարողութիւններով գործուած ըլլան եւ՝ արագ նուաճումներ ծրարելու ստանալ:

«Կը սպասենք Հարիրիի եւ նախագահ Աունի որդեգրելիք քայլերուն, մտալով առաւելագոյն չափով դրական, ինչպէս նաեւ պատրաստ՝ ամեն իմաստով գորակցութեան», ըսաւ Պասիլի:

Լեռնալիբանանի երաշխիք պլոքը իր կարգին հանդիպում մը ունեցաւ Հարիրիի հետ:

Հանդիպումէն ետք, երեսփոխան Մարիո Աուն յայտնեց, որ վարչապետէն ինդրած են Լեռնալիբանանի իւրայատկութիւնը ի մտի ունենալ՝ կառավարութեան կազմութեան ընթացքին:

Հարիրի ընդունեց Սուսթաքալ պլոքը, որուն անուկով երեսփոխան Սամիր Շքըր յայտնեց, որ պլոքը կառավարութեան կազմութեան մակրամասնութիւնները կը վստահի Հարիրիի:

Հաւատարմութիւն դիմադրութեան պլոքին հետ վարչապետ Հարիրիի հանդիպումէն ետք, պլոքի նախագահ, երեսփոխան Սոհամետ Ռաատ յայտնեց, որ իրենք պատրաստ են գործակցելու վարչապետ Հարիրիի հետ:



«ԳՈՅԱՅԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ» ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱՎՈՒԹԻՒՆ

Table listing donors and their contribution amounts in Armenian Lira (լ. դ.). Includes names like Փոքրիկներ ժուռ եւ Նոա Հալլուոյ, Գերոգ Գրիգոր Պորանեան, Ազգային մը, etc.



«ԳՈՅԱՅԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ» ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱՎՈՒԹԻՒՆ

- List of donors and amounts: Կարեն Սիւտալետեանի մահուան առիթով 100 եւրօ, Ազգային մը 300.000 լ. դ., etc.

ՄԱՀԱՉԳ

Վահե Եւ Էթի Պեգեան եւ զաւակուք Ռոպերթին եւ Նաթալի Պողոսեան Յարութ, Կիզել եւ Յակոբ Զափարեանները եւ ընտանիք (Միացեալ Նահանգներ) Մարի Մոտեսեան եւ զաւակը՝ Յովիկ եւ ընտանիք (Կիպրոս)

Փարին Գույումճեան Պողոսեան եւ Պեգեան ընտանիքներ Գույումճեան եւ Զափարեան ընտանիքներ Մոտեսեան ընտանիք եւ համայն ազգակցները կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, զոքանչին, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ՍՕՍԻ ՊՕՂՈՍԵԱՆԻ (Ծնեալ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 23 հոկտեմբեր 2020-ին, առաւօտեան ժամը 6:00-ին: Յուզարկարութեան արարողութիւնը պիտի կատարուի շաբաթ, 24 հոկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխարկուի Պոլոք Զամուրի Ազգային գերեզմանատունը: Երկրպայ ընդունիլ իբրեւ մահազգ: Երկրպայ պայմաններու բերումով ցաւակցութիւնները յայտնել հեռաձայնով Էթի՝ 03-129875 եւ Նաթալի՝ 71-100680: Կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Արցախ ֆոնտ»-ին:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ԳԻՆԳ ԳԵՏԵԼԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԽԱՍՏԱԾ ԵՆ ՍԱՅՍԱՆԱՅԻՆ ԿԱՊՈՅՑ ԳԻԾԸ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը երկն հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, թէ հիւնզապթի, 22 հոկտեմբեր 2020-ին իսրայէլացի հինգ հետեակ զինուորներ խախտած են սահմանային Կապոյտ գիծը եւ 30 մեթր յառաջացած են դէպի Ռաս Նաքրուր:

Ըստ բանակի հրամանատարութեան, անոնք լիբանանեան հողերուն վրայ հինգ վայրկեան մնալէ ետք հեռացած են դէպի բնակարանուած Պաղեստին: Սահմանային այս խախտումին մասին հետաքննութիւն բացուած է լիբանանեան բանակին եւ ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն կողմէ:

ՀԱՂՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅ ԱՇԱԿԵՐՑ ՀՈՎԱՆԱՒՈՐԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ»- 2020-2021 ՏԱՐԵՇՐԶԱՆ



Կրթական նոր տարեմուտի մը սեմին սրտանց կը մաղթենք, որ մերօրեայ կենքի դժուարին պայմաններուն մէջ մեր ազգային վարժարանները յաջողին՝ լուսաւորել մը գտնելով իրենց աշխատանքին համար, հաւատարմօրէն շարունակել մեր ազգի մատուցած սերունդի դաստիարակութեան սրբազան առաքելութիւնը:

Այսօր կարիք չկայ յիշեցնելու, թէ ծանր տագնապի մէջ կը գտնուի նաեւ հայ դպրոցը, որ՝ զըրկուած ըլլալով սեփական նիւթական միջոցներէ ու կարելիութիւններէ, իր մարդակերտումի աշխատանքին համար ամբողջութեամբ կ'ապաւիտի անուստիտ բարերարներու նիւթական եւ բարոյական զօրակցութեան: Արդարեւ, մեր կենքին մէջ ստեղծուած են նոր վիճակներ: Քայքայուած տնտեսութեան մը պայմաններուն մէջ հայ ծնողն այլ կը դիմագրուէ ապրուստ ապահովելու լուրջ դժուարութիւններ, հետեւաբար, անկարող է հոգալու իր զաւակին դպրոցական ծախսը:

Տուեալ պայմաններուն մէջ, հայ աշակերտը հայ դպրոցին մէջ պահելու առաջադրանքով, Լիբանանի Հայոց թեմի Ազգային վարչութիւնը 2020-2021 տարեշրջանին համար վճեցած անվճար ուսման կարելիութիւններ ստեղծել ազգային վարժարաններուն մէջ՝ վստահ ըլլալով, որ հայ աշակերտին աջակից բարեկամներ եւ հայ կրթութեան սրբազան գործի պաշտպան բարերարներ իրենց կարեւոր աջակցութեամբ կանգուն կը պահեն սերունդներու տեսիլքով կերտուած հայ դպրոցն ու հայեցի կրթութեան սրբազան աւանդը:

Ուստի, այսու կոչ կ'ուղղենք բոլորիդ, որ 2002 թուականէն սկսեալ Ազգային առաջնորդարանին կողմէ հաստատուած «Հայ աշակերտ հովանաւորելու ծրագիր»-ին բերելիք ձեռնմաստակցութեամբ օգնէք հայ աշակերտին եւ կանգուն պահէք հայ դպրոցը: Տարեկան 250 ամ. տոլարով դուք կրնաք մեր ազգային վարժարաններուն մէջ հովանաւորել հայ աշակերտի մը կրթութիւնը, իսկ միահամուռ զօրակցութեամբ աւելի մեծ վըստահութեամբ միասնաբար կրնաք նայիլ մեր ժողովուրդի ապագային:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար 961-1-258-301 հեռաձայնի թիւով կրնաք կապուիլ մեզի հետ եւ կամ fund@armprelacyb.org ե-նամակի հասցեով գրել մեզի:

Լիպոյս ենք, որ պատրաստակամութեամբ կ'ընդառաջել մեր կոչին:

ԴԻՆԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՈՍՏՆՈՐԱՐԱՆԻ

ԴՐՈՒԱԳ ՄԸ... ՎԱՐԱՆՆԻՆ ՀԵՏ

Վերջին անգամ 2019-ի յուլիսին հանդիպեցայ ընկեր Վարանին, «Հայկազեան» համալսարանի երկրորդ տան: Այդ օր դուրս ելա: Հուրի Պերպերեան պիտի ներկայացնէր իր վերջին գործը: Ան կ'արձարձեր իր հայ յեղափոխականներու դերը ուսանական, պարսկական եւ օսմանական յեղափոխութիւններու օրերուն: Վարանին նախասիրած նկարներն մէկն էր, եւ ան ո'չ միայն մեծ խորանային հետ: Ահաւասիկ դրոշակ մը: Մարտ 1990. վարձը Պերպերեան արեւմտեան շրջանի հայահոծ Տաւու Փաշա փողոց, կամ աւելի դիրտութեամբ բացատրելու համար՝ ՅԱՄԱՐ քաղաքի ակումբի եւ Նշան Փալանճեան ճեմարանի փոքր դրան (այդ օրերուն կանաչ, այժմ՝ յարդի գոյն) ճամբան:



Կարանը Փափագեանի մահուան քառասունընամյա տարեդարձի առիթով ստորեւ կը վերահրատարակենք իր ստորագրութեամբ «Ազգակ»-ի մէջ լոյս տեսած «Քարին վրայ» խորագիրով յօդուածը՝ գրուած Շուշիի ազատագրութեան 25-ամեակին առիթով: Վերահրատարակութեան հիմք հանդիսացաւ յօդուածին մէջ ամփոփուած մտածումներուն եւ վերլուծումներուն այժմեական նշանակութիւնը:

Այդ օր պարզ ողջագոյրում եւ կարճ գրոյց մը ունեցանք: Զանի մը օրով եկած էի ծննդավայրս, յաջորդ օրն իսկ պիտի վերադառնայի... Ահա՛, չէի գիտեր, որ մեր վերջին հանդիպումը պիտի ըլլար:

Յիշատակելի պատահարները շատ են Վարանին հետ: Ահաւասիկ դրոշակ մը:

Մարտ 1990. վարձը Պերպերեան արեւմտեան շրջանի հայահոծ Տաւու Փաշա փողոց, կամ աւելի դիրտութեամբ բացատրելու համար՝ ՅԱՄԱՐ քաղաքի ակումբի եւ Նշան Փալանճեան ճեմարանի փոքր դրան (այդ օրերուն կանաչ, այժմ՝ յարդի գոյն) ճամբան:

Այդ օրերուն բաժան-բաժան եղած էր փոքր մը Լիբանանը: Պերպերեան Անթիլիաս կամ Տզապպա երթալու համար ժամերով գանձակ «քրէշիստութիւններ»-ու անցարգելները պետք է «վայելէիք»: Այնքան մը, որ Պերպերեան օդակայանէն օրական քանի մը թռիչք կը կատարուէր դէպի Թրիփոլիի գիւնտարանակա Քլէյաթի (Լիբանանի ծովեզերեայ տհած շրջաններէ մէկը, որ ոչ մէկ կապ ունի Զեպրանի համանուն շքեղ գիւղին հետ) օդակայանը... որ աւելի մօտ էր Սուրիոյ սահմանին, քան՝ հիւսիս-արեւմուտեանը:

Մեր ուղեւորութիւնը տարբեր ուղղութեամբ էր, եւ վեց ժամէն աւելի ըջած էրէն... Անթիլիասէն մայրաքաղաքի արեւմտեան կողմը հասնելու համար: Այդ ժամանակ վերոյիշեալ թաղին մէջ կը բնակէր Վարանը: Մեզի հետ բերած էին «Ազգակ»-ի թիւեր եւ, առիթու օգտուելով, յանձնելու ժամանակ, բարեւ մըն ալ պիտի ըսէինք մեր ընկերոջ: Չէիք կրնար երկար մնալ: Վերադարձի ճամբան ալ նոյնքան երկար էր: Այսօր, երեսուն տարի ետք, գերադրական «Կուկլը»-ն անգամ կու պիտի չկարենար տան... Խոր հաւատով: Ընկեր Վարանը՝ եզակի տիպար մը, որ այս օրերուն գրեթէ անգտանելի է: Այո՛... մոմով ալ, խունկով ալ կարելի չէ գտնել:

Վերադարձն ալ նոյն «արահետներ»-ու ուղիովն էր, անշուշտ այն պայմանով, որ արեւմուտն չեղած նախընտրելի էր հասնիլ գոնէ Պիքֆայա:

Ինչպէ՛ս եկաք.- հարցուց Վարանը, ըստ սովորութեան, մեծ հետաքրքրութեամբ: Պատասխանս... վերոյիշեալ գիւղերու շարքին էր, եզրակացնելով եւ երկիւստս փոխաբերական արտայայտութիւն մը կատարելով, թէ՛ «Լուսաւոր ուղի»՝ մը բռնած էիք: Վարանը, մերթ ակնոցներու ետին պահուըտած աչքերը մեծ բանալով, մերթ պէխերուն տակէն ժպտելով իր գարմանը կ'արտայայտէր:

Ուրե՛ն ճամբայ մը բաց ձգած են, - եզրակացուց ան: - Այո՛, ըստ երեւոյթի Սուն Յուրի՞ ո՞ն է, որ կը կիրարկուի, - դիտմամբ յայտնեցի՝ սպասելով եւ կռահելով իր պատասխանը, որ չուշացաւ: **Ինչու այս «շարլաթան»-ները Սուն Յուրիին ինչ ըլլալը գիտէ՛ն: ... Գիտէ՛ն, թէ պաշարելով եւ յոյսի կամ փախուստի ճամբայ մը բաց չձգելով կրնան շատ աւելի կատարողի առճակատումի դուռ բանալ: Վստահաբար, այս «լորտ»-երը միայն ու միայն առեւտուրի եւ անձնական շահերու համար ճամբայ մը բաց ձգած են:**

Տեղին էր Վարանին սուր եւ ճշգրիտ վերլուծումն ու եզրակացութիւնը: Կատակով, աւարտելու համար մեր այս ճամբորդութեան նիւթին շուրջ գրոյցը, ժպիտով մը եզրակացուցի՝

Ծի՛շո՛ ես, ընկեր, ասոնք Սուն Յուրի ով ըլ-

ՐԻՑ ԸՆԿԵՐ:

- Ընկեր, հոգ մի՛ ընէր, ամէն ինչ ապահոված ենք. - պատասխանեցի՝ հետս ընկերացող երիտասարդի մը օգուտով: Գրոյց տալով ինքնաշարժին մէջ տեղ գրաւած հացի կապերն ու ընդդէմներու տոպրակները:

Վարանը ճանչցողը գիտէ, թէ ի՛նչ պիտի պատահէր: Պատահմամբ, մեր չար եւ իր բարի բախտէն, շրջուն բանաշարավաճառ՝ «արապաճի» Մահմուդը (թաղի հայութեան սիրուած բանաշարավաճառը, որուն յաճախ կ'ուրուտուած արաբներով հայ յաճախորդ-յաճախորդուհիները Մամուտ եւ նոյնիսկ Մայրամուտ կը կանչէին), մեր մօտակայքը կանգ առած կը փորձէր շրջանի բնակիչներուն թարմ կանաչեղէն եւ պտուղ ծախել: Այս վաճառականին հետ Վարանին արագ գրոյցն ու «Ալին» (իր կողակիցը), արագ դրամապահանք նետէ՛ն-ն մէկ եղաւ: Եւ յանկարծ տեսնեմ ինքնաշարժիս դռներն ու ստուուկը բաց, տոպրակներով լոլիկ, բողկ, հազար, նարինջ, մանտարին եւ այլն, կը գետնողկուի:

Վարան, կարիքը չկայ ասոր... - խօսքս չաւարտած, արդէն անոր պատասխանը յստակ էր:

Ստուց բոլորին համար ես: Ձեր շըրջանը գրեթէ շրջապատուած է: Տղաքը վստահաբար անօդի ենք թող թարմ սնունդ ստանալ:

Ուրախ էր Մահմուդը, որ այդ օր շնորհիւ միայն մէկ յաճախորդի կրցած էր ապահովել իր օրապահիկը: Նոյնքան ուրախ էր եւ հոգեպէս հանգիստ կը գզար նոյնիսկ յաճախորդը՝ Վարանը:

Տղաքն ալ ուրախ էին: Երեկոյեան ժամը ութի մօտ հասած էինք Անթիլիաս, եւ անոնք այդ օր առանց «Մա Լինկ»-ի «գէխ» ընթրիք մը կատարած էին: Տղաքը տեղեակ չէին, թէ մատակարարողը Սուն Յուրի երկրպագու Վարանն էր, որ վստահաբար չէր ալ հաշուած այդ օր մայրամուտէն շատ առաջ տուն հասած՝ Մահմուտին յանձնած գումարը:

Շարքաթ, սեպտեմբեր 12-ին Վարանը իր հարազատները տեղեակ չէապէս, որովհետեւ ինքն ալ տեղեակ չէր, թէ «երազային գիտա-երեւակայական ճամբորդութիւններէն մէկուն ձեռնարկած է տիեզերանաւու մը մէջ»՝ անվերադարձ մեկնելու համար դէպի անջըրպետային վայր մը, ըստ տակաւին Շուշի մը գոյութիւն ունի... Քարին Տակէն՝ քարին վրայ, բարձր, շարժ բարձր բերդաքաղաք մը, միայն ու միայն վերապահած՝ անձնագրուհներու, իրագրութեան եւ վեհանձններու:

Պէխերուն տակ թաքուն ժպիտ մը, նուիրում... խոր նուիրում, նաեւ հաւատք... խոր հաւատք: Ընկեր Վարանը՝ եզակի տիպար մը, որ այս օրերուն գրեթէ անգտանելի է: Այո՛... մոմով ալ, խունկով ալ կարելի չէ գտնել:

***«Լուսաւոր ուղի»-ն («Sendero luminoso») Փերուի ծայրայեղ ձախակողմեան ընդդատակեայ կազմակերպութիւնն էր՝ ղեկավարութեամբ այլախոհ Ալիմայել Կուսմանի, որ վաթսուականներու ատարուն մինչեւ իր ձեռնարկուիլը՝ 1992-ին ահաբեկչական արարքներ կատարած էր՝ ահ ու սարսափ սփռելով: Թէեւ Վարանը չէր բաժնէր անոնց ծայրայեղ գործելանքը, սակայն կերպիական այս շարժումներով մօտէն հետաքրքրուած էր:**

****Քրիստոսէ առաջ արած՝ ռազմագետ, գրագետ եւ փիլիսոփայ Սուն Յուրի «Պատերազմի արուեստը» («Art of war» - Sun Tsu) գիրքը, որ իր նախասիրած գործերէն մէկն էր: Վարանը միշտ ալ ակնածանքով կ'արտայայտուէր Սուն Յուրի մասին եւ անոր գործն օրինակներ կը բերէր:**

***** Չինաստանէն առաջուած պահածոյ տուփեղէն միս, որ ամբողջ պատերազմի ընթացքին անպակաս էր խեղճ ու կրակ սեղաններէն:**

2. ԹՈՒՐԿԱՆ

Պոսթըն

ՀՈԳԵՎԱՆԳԻՍ

ՎԱՐԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆԻ մահուան քառասունընամյա տարեդարձի առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 25 հոկտեմբեր 2020-ին, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՔԱՐԻՆ ՎՐԱՅ



«Ա.»

1988-ին ծայր տուաւ Արցախի հայութեան ինքնորոշման պայքարը: Ազգայնապաշտպանական կեանքը, եւ Շուշիի դիրքը դարձաւ փորձանք Ստեփանակերտի գլխուն: Ազգայնապաշտպանական զօրքը իր «Կրատ» հրթիռներով անխնայ հարուածեց Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը եւ շրջակայքը՝ պատճառելով զոհեր, դժուարացնելով հասարակական կեանքը, քանդելով տընտեսութիւնը ու արգելակելով ազատագրութեան գործընթացը:

Լեռնային Ղարաբաղի իշխանութեան եւ նորակազմ բանակի հրամանատարութեան համար կենսական կարեւորութիւն ունէր ազգայնապաշտպանական զինուորներուն վնասագործումը եւ ազգայնապաշտպանական լուծէն ձեռքբազատումը: Որոշուեցաւ ազատագրել Շուշին, եւ յարձակումի ժամկէտ ճշդուեցաւ 1992 մայիսի 8-ը: Արձանագրեց, որ նոյն օրը իրանեան իշխանութիւնները, շրջանցելով Մուկուան, կազմակերպած էին շրջանային խաղաղութեան ձգտող եռակողմանի հանդիպում մը Թեհրանի մէջ Հայաստանի նախագահին, Ազգայնապաշտպանական պաշտօնակատարին եւ Իրանի նախագահին միջեւ՝ քննելու համար հակամարտութեան լուծումի կարելիութիւնը:

Մայիս 8-ի առաւօտեան շուրջ ժամը մէկին բարձրացանք Շուշիի հանդիպակաց բլուրները: Մութ գիշեր էր, թէեւ ամպերուն վրայ լոյսերու ցոլացումը կու տար մթնշաղի տպաւորութիւն:

Բանակի հրամանատարութեան գաղտնապահութեան մասին հրահանգը կ'արգիլէր լուսաւորութիւն եւ արմուկը, հետեւաբար, Վաղոն չէր միացուած լոյսերը, որոշ բարձունքի մը հասնելէ ետք ան անջատած էր նաեւ շարժիչը: Մեր ինքնաշարժը դադարած էր մեթենայ ըլլալէ եւ անշուշտ նաւակի նման կը սահէր ճանապարհի ի վար, լարուած լուրսութեան մէջ:

Յանկարծ աչին՝ հսկայ շուքեր: Ճամբուն եզրին երեւցան բազմաթիւ հրասայլեր եւ փոխադրակառքեր, երկնքի կիսամութ պատտարհի վրայ ուրուագծուող զրահապատ մեթենաները կը սպասէին յարձակման հրամանին: Տեղիք էր դարձանակալ շարասիւնին յայտնութիւնը, հայոց լուռ եւ զուսպ այրուծին կ'առջեր ահ եւ հպարտութիւն:

Անցանք անդին, բարձրացանք Շուշիի հանդիպակաց բլուր մը, քալելով մօտեցանք գազաթիւն եւ նայեցանք դէպի Շուշի, տեսանք միայն մութ մթնշաղէն տարբերող անյստակ գանգուած մը: Ժամը առաւօտեան 2:00-ն էր:

Գոռաց հայկական հրետանին:

Եւ Շուշին լուսաւորուեցաւ:

Յաջորդող քանի մը ժամերուն թնդանօղները կրակեցին գրեթէ անդադար, Շուշին անընդմէջ փայլատակեց հրդեհներու պողոթններով: Հորիզոն բռնկած էր, յափշտակուած կը դիտէինք քաղաքին բոցավառ քանդում-վերածնունդը, բառ կար արտայայտելու գոյութեանական վայրկեանը, կարելի էր միայն

վկայել պատմական շրջադարձը:

Առաւօտեան դէմ քշեցինք դէպի այն բլուրը, ուր տեղակայուած էին բանակի հրամանատար՝ «Կոմմանտոս»-ը, գնդապետ Արկադի Տեր Թադեւոսեանը եւ իր ռազմական շտապը: Նախագահի պաշտօնակատար Գերգի Պետրոսեանը միացաւ հրամանատարական կազմին, Վաղոն եւ ես մնացինք քիչ մը հեռու: Ժամը 7:00-ի շուրջ ռազմածուր մեղմացաւ. զրահապատ ուժերուն եւ հետեւակ միաւորներուն հրաման տրուեցաւ շարժելու առաջ եւ դարձողորմի ոլորաններէն բարձրանալու դէպի Շուշի:

Վաղոն մեզի տարաւ նոյն ուղղութեամբ: Դէպի Շուշի տանող ճամբուն մօտաւորապէս կիսուն, ճամբեզրին կար ապակիներու գործարան մը, ուր կանգ առինք: Ժամը 8:00-ի մօտեղը դէպի Շուշի բարձրացող հետեւակ զօրասիւն մը եւ զրահապաշտպանական զործարանին մուտքին: Այդ պահուն է, որ հեռատեսիլի նկարահանող Պազուր գիտնորները նկարած ժամանակ մեզի եւս առաւ իր ոսպնեակին մէջ: Կարճ հանգիստէ մը ետք զօրասիւնը անկունակեց իր երթը դէպի Շուշի:

Կրակոցները եւ պայթիւնները անկանու կերպով շարունակուեցան մինչեւ կէսօր ետք ժամը 1:00, երբ լուր տուին, որ ազգայնապաշտպանական ուժերը լքած են Շուշին: Իջանք Ստեփանակերտ. կարճ ժամանակ ետք Ազգային ժողովի անդամներու եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգէտ սրբազան Մարտիրոսեանին հետ վերստին բարձրացանք Շուշի:

Շուշիի մուտքին հայկական գերեզմանոցին տեղահանուած կամ քանդուած գերեզմանաքարերը պատմեցին ազգայնապաշտպանական մուղեկութեան մասին, բերդին մուտքին ինկած ազերի գիւնտորի մը դիակը, ածխացած շէքերը եւ Ս. Ամենափրկիչ եկեղեցիին գաւիթին մէջ տեղադրուած ազգայնապաշտպանական հրթիռներու արկերը: Կարճ ժամանակ հրթիռներու արկերը հաստատեցին թէ՛ կռիւլ, իսկ եկեղեցիին խորանին առջեւ սրբազանի առաջնորդութեամբ կատարուած «Հայր մեր»-ը վկայեց հայոց յաղթանակը եւ Շուշիի ազատագրումը: Մայիսի 8:00-ն էր, մօտաւորապէս ժամը 3:00:

Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները յայտարարեցին, որ Շուշիի ազատագրումի պաշտօնական օրը մայիսի 9-ն է: Այդպէս թող ըլլայ, բայց, կը հաւատամ, որ ամէն տարի մայիսի 8-ին շնորհակալ «Հայր մեր»-ը կ'արձագանգէ Ս. Ամենափրկիչի խորանէն:

ՎԱՐԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Շար.ը՝ էջ 4

ՈՒՐԱՆԵԱՑՆՈՂ ՈՒՍԱՆ

- Զիչ ետք պատրաստ եղիր, Ուստան դիտելու պիտի երթանք.- ըսաւ քեռիս:

Ես ուրախութեան սկսայ ցատկուտել, որովհետեւ շատ կը սիրէի ծիճաղաշարժ շարժապատկերներ: Հայրս նոր մահացած էր, եւ քեռիս ասեցը մէյ մը գիս սինեմա կը տանէր: Տակաւին 10 տարեկան չկայի:



Անպայման «Ուստան»-ն շարժապատկերի հերոսն էր («Ֆիլմին պաթալիս») անունն էր, ինչպէս՝ Չարլի Չափլին, Նորման Ուիլսոնը եւ այլն: Այդ դերասանները գիտէի, բայց Ուստան՝ ոչ: Վստահ անոնց նման պիտի խնդացնէ:

Տունէն իջանք եւ քեռիս ընկերոջը հետ սկսանք քալել, բայց փոխանակ սինեմա «Արաքս» կամ «Սեւան» մտնելու, բարձրացանք խճողուած հանրաշարժ մը, որ մեզ ֆուլթայլի դաշտ հասցուց:

Մտածեցի՝ աւելի ուշ պիտի երթանք սինեմա: Մտանք դաշտ:

Այդքան բազմութիւն քան տեսած չէի: Բոլորն ալ հայեր: Ամէն ոք գիրար կը ճանչնար, իրարու հետ բարձրաձայն կը խօսէր: Չարմանալի. յաճախ կը լսէի «Ուստան» բառը: Իսկ երբ նարնջագոյն տարազներով մարզիկները խաղադաշտ մտան, բազմութիւնը սկսաւ պոռալ:

- ՅԱՄԱՆ, ՅԱՄԱՆ...

Քեռիս մատովը ցոյց տուաւ մարզիկ մը եւ ըսաւ.

- Ան Ուստան է: Ամէնէն լաւ ֆուլթայլիստը:

Նեղուեցայ, որ Ուստան շարժապատկերի կամ դերասանի մը անունը չէ, եւ մենք սինեմա պիտի չերթանք, իսկ այս Ուստան կոչուածը շատ ալ խնդացնող չի նմանի:

... Այո՛, խնդացնողի չէր նմանը, բայց ուրախացուց, խանդավառեց բազմապատկեր հայեր՝ շուրջ քսան տարի ՅԱՄԱՆ-ի տարազ կրելով, բարձրանալով եւ բարձրացնելով: Մնաց հաւատարիմ իր խումբին, նոյնիսկ մերժելով եւրոպական ակումբէ առաջարկ մը:

Ֆուլթայլիստի ասպարէզը լքել տասնամեակներ ետք, առաջին անգամ առիթ ունեցայ հետը ուղղակի հաղորդակցելու:

1990-ականներուն լիբանանեան կռիւները վերջ գտած էին, եւ ֆուլթայլի արտայայտութիւնը վերսկսած: ՅԱՄԱՆ բաւական լաւ խումբ ունէր, ընդհանուր խանդավառութեան մթնոլորտին նոյնպէս կը նայատէր «Վանայ ծայն»-ը դաշտէն ուղղակի ծայնասփռելով ՅԱՄԱՆ-ի մրցումներուն մանրամասնութիւնները եւ նոյնպէս ներկայացնելով իրն աստղերը՝ Ուստան, Աթո, Ծոքի, Հրայր եւ այլն՝ անոնց հետ հարցազրոյցներով:

Ուստային հետ հարցազրոյցը ծայնագրեցինք Արոյի վաճառատան մէջ, ուր պատիւ տեղադրուած թուղթի մը վրայ գրուած էր. «Հոս ֆուլթայլ չենք խօսիր»:

Այդուհանդերձ խօսեցանք:

Տխուր աչքեր ունէր, կորսնցուցած, անդարձ մեկնած փառքի մը ցա՛նը կ'ապրէր, ո՛վ գիտէ: Ուրախացաւ հարցազրոյցին համար: Ես գոհ մնացի, որ ինծի առիթ ընձեռուեցաւ յարգելու ՅԱՄԱՆ-ի ֆուլթայլի իրն աստուածներէն մէկը:

1950-ական, 1960-ական թուականներու ֆուլթայլի մասնագետները եւ լրագրողները ըստ արժանաւոր գնահատած են զինք, սակայն, իմ կարծիքով, դիպուկ եւ լաւագոյն բնութագրումը ընողը անոր պահապան հրեշտակը՝ ընկ. Վարդգէս Աղասարգիսեանն է, որ, վստահ եմ, բոլոր մրցումներուն ներկայ գտնուած է:

Երբ կիրակի մը մահազոյր բերաւ «

ՄԻԱՅԵԱԼ ԵՎ ՀԱՎԱՆՔՆԵՐՈՒ...

Շարունակում Ա. Էջև

արցախեան տաճկապի գոտիին մէջ պատերազմը դադարեցնելու եւ քաղաքական գործընթացներու վերսկսելու:

Ստորեւ՝ նամակի ամբողջութիւնը. «Մեծարգոյ Վարդիմիր Վարդիմիրի, Արցախ-Ռուսաստան անկախութիւնները դարերի պատմութիւն ունեն: Ռուսաստանը արցախցիները պատմական յիշողութեան մէջ ընկալուած է որպէս եղբայրական երկիր, որը մշտապէս, բոլոր դժուարին իրավիճակներում ձեռք է մեկնել հաշտութեան այս հատուածին:

Արցախ-Ռուսաստան անկախութիւնները ամենաուղիղ կերպով իրականացուել են յատկապէս Արցախի մեղիութիւնները եւ մեղիքական տները ծաղկուն շրջանում, որի մասին փաստական վկայութիւնները բազմաթիւ են:

Մէկ հարիւրամեակից աւելի (19-րդ դարում եւ 20-րդ դարի 10-ական թթ.) Ղարաբաղը գտնուել է ցարական Ռուսաստանի կազմում: Այդ պատմական ժամանակաշրջանը Ղարաբաղի համար նշանակուած է երկարատեւ խաղաղութեամբ, հայրենասարժութեամբ եւ տնտեսական զարգացմամբ: Զարգացել է նաեւ մշակութային կեանքը: Յատկանշական է, որ 19-րդ դարի երկրորդ կէսից Արցախի վարչաքաղաքական կենտրոն Շուշին դարձել էր Անդրկովկասի հոգեկոր, մշակութային եւ տնտեսական կարեւոր կենտրոններէն մէկը:

Նոյն պատմաշրջանում Ռուսական կայսրութեան ռազմաքաղաքական եւ հասարակական կեանքում առաջնային դերակատարութիւն է ունեցել արցախահայութեան մի որչ համաստեղութիւն՝ Վարդիմիր Մատաթով, Յովհաննէս Լազարեւ, Լազար Սերեաբրեանով, Միքայէ Լոռիս-Վեդիքով, Վասիլի Պեպելով եւ ուրիշներ:

Այդ անկախութիւնները շարունակուել են նաեւ խորհրդային շրջանում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Լեռնային Ղարաբաղի հիքնավար մարզից եւ պատմական Արցախից Հայրենական մեծ պատերազմի մասնակցել է շուրջ 90 հազար հայորդի, որոնց կէսը իրենց կեանքն են նուիրաբերել հայրենիքի պաշտպանութեան գործին: Մէկ շնչի հաշուով խորհրդային Միութեան հերոսների եւ մարտական «Փառքի շքանշան»-ի ասպետների քանակով Արցախը ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր առաջատար տեղերից մէկը:

ԽՍՀՄ հայագրի հինգ մարշալները արժանտեղով Արցախից էին՝ Յովհաննէս Բաղդամեանը, Իսա Իսակովը, Համազասպ Բաբաջանեանը, Արմենակ Խանկերեանը (Սերգեյ Խուտեակով), Սերգեյ Ազանովը: Իրենց զորավարական տաղանդով փայլել են 30-ից աւելի գեներալներ ու հազարավոր սպաներ:

Արժանտեղով Արցախից էին Անաստաս եւ Արտեմ Միկոյեանները, Իսա Թեոտեանը, Անդրանիկ Իսիֆեանը, Նիկոլայ Ենիկոլոպովը, Միքայէ Թարիերիքեանը եւ բազմաթիւ այլ երայրակներ:

Արցախ-Ռուսաստան սերտ անկախութիւնները շարունակուել են ցայսօր: Ռուսաստանեան մօտ 3 միլիոն հայերի մի պակասակցի մասը Արցախից է, որոնց թուով շատ են նաեւ 1980-ական թթ. վերջին եւ 1990-ական թթ. ազդեցականական ցեղասպան եւ ցեղային զտումների քաղաքականութեան հետեւանցով Արցախից թնի տեղահանութեանը:

Կը ցանկանայի յատուկ շեշտել, որ ազդեցական-դարաբարեան հակամարտութեան կարգադրման սկզբունքի օգտին ունեցած գործելակերպը: Ազդեցական-դարաբարեան հակամարտութեան կարգադրման գործընթացում Ռուսաստանն հանդէս է գալիս թէ՛ ԵԱՀԿ Մինսկի խմբակի համահաշակառութեան ձեռնարկում եւ թէ՛ առանձին դերակատարութեամբ: Արցախի Հանրապետութեան կարգադրման գերազանցակցում Ռուսաստանի միջնորդական ջանքերը, ակտիւ դերակատարութիւնը եւ որոշիչ առաջնությունը հակամարտութեան կարգադրման բոլոր փուլերում՝ յատկապէս, 1994 թ. հրադադարի ետակով համաձայնագրի ձեռքբերման գործում: Ռուսաստանն որոշիչ դերակատարութեամբ հանդէս եկաւ նաեւ ազդեցականադարաբարեան հակամարտութեան սրման հերթական փուլում՝ 2016 թ. ապրիլի 5-ին՝ Ռուսաստանի միջնորդութեամբ Մոսկուայում ձեռք բերուեց պայմանադրութեան ռազմական գործողութիւնները դադարեցնելու եւ հրադադարը վերականգնելու մասին՝ համաձայն 1994 թ. հրադադարի հաստատման համաձայնագրի:

Բարձր են գնահատում Ռուսիոյ եւ անձամբ ձեր դիւանազական գործունէ ջանքերը՝ ուղղուած Ազդեցականի կողմից Արցախի դեմ սանձազերծուած ագրեսիան եւ լայնածաւալ պատերազմը կանգնեցնելու: Ուզում են նաեւ ձեռք տեղեկացընել, որ Արցախի Հանրապետութիւնում եւ որչ հայութեան շրջանում մեծ արձագանգ է ստացել «Վախոյ» ակումբում ձեր ելոյթում հնչած առարկայական գնահատականները ստեղծուած իրավիճակի մասին:

Պեզ նշել են ձեր ելոյթում. «Այս հակամարտութիւնը սկսուեց թէ՛ որպէս Եւրոպայական հակամարտութիւն եւ տարածքների համար պայքար, այն սկսուեց ցեղային դիմակայութիւնից: Տաւօք, սա փաստ է. Սուվլայիթում, սպայ Լեռնային Ղարաբաղում հայ ժողովրդի դեմ դաժան յանցագործութիւններ էին իրագործուել: Եւ այս ամէնը մենք պետք է հակարգումարում հազուի առնենք»: Դժբխտաբար, այս ցեղասպան քաղաքականութիւնը Ազդեցականը շարունակում է առ այսօր:

Մեծարգոյ՝ Վարդիմիր Վարդիմիրի,

Պեզ այն անհատականութիւնը եւ պետութեան ղեկավարն էք, ով ունի ակալական հեղինակութիւն աշխարհում եւ մեր տարածաշրջանում: Հաշտի առնելով այդ ամէնը, խնդրում ենք ձեզ գործադրել բոլոր հնարաւոր ջանքերն ազդեցականադարաբարեան հակամարտութեան գոտում պատերազմի դադարեցնելու եւ քաղաքական գործընթացների վերսկսման ուղղութեամբ»:

ԱԶԳԵՅՏԱՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏԵՐ

Արցախի դեմ 27 սեպտեմբերին սանձազերծած լայնածաւալ յարձակման եւ ռազմական գործողութիւններուն պատճառով Ազդեցական ունեցած է կենդանի ուժի 6539 կորուստ:

Հայկական միասնական տեղեկատուական հարթակը հրատարակած է ազդեցականական կորուստներու նոր տուելայներ, որոնց համաձայն, հակառակորդը կորսնցուցած է ընդհանուր արմամբ 206 սնօղաչու թռչող սարք, 16 ուղղաթիռ, 24 ինքնաթիռ, 588 զրահամեքենայ, 4 SOU:

Վերջին օրուան ընթացքին խոցուած է 4 սնօղաչու սարք, 8 զրահամեքենայ, կայ 80 զոհ, այս տուելայներն արդէն ներառուած են ընդհանուր թիւերուն մէջ:

●Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոիրայ Մնացականեանը «Սի.Էն.Էս.» պատկերասփիւռի կայանէն բարձրաձայնած է Ազդեցականի զինուած ուժերուն կողմէ Արցախի բնակավայրերու թիրախաւորման մասին:

«Երբ մենք այստեղ ենք՝ Ուաշինկթընի մէջ, երբ մենք կը փորձենք ամրապնդել հրադադարի պայմանադրութեան ստեղծութիւնը, խարդող լուծման վերադառնալ, մենք կը ստանանք Հայաստանէ ու Լեռնային Ղարաբաղէն հաղորդագրութիւններ, որ քաղաքացիական բնակավայրերը՝ Ստեփանակերտը, Մարտունիք, Հատուրթը կրկին կը թիրախաւորուին Ազդեցականի զինուած ուժերուն կողմէ: Զաղաքացիներ կը գոհուին», ըսած է Մնացականեան: Նախարարը անելուցած է, որ կան անվտակալական գիծեր, որոնց չըլլալու պարագային Արցախի ժողովուրդը պիտի կանգնի ցեղային գոտման սպառնալիքի դիմաց:

●ՂՀխարհի մէջ ցեղասպանութեան վտանգի գնահատումով զբաղող հեղինակաւոր «Genocide Watch» կազմակերպութիւնը Ազդեցականի «շտրիած է» ցեղասպանութեան սպառնալիքի 9-րդ՝ բնաշնչում եւ 10-րդ՝ ժխտողականութեան աստիճանները: Ըստ «Վերսիփութ»-ի, Genocide Watch-ի կ'անդրադարձնայ 27 սեպտեմբերին Ազդեցականի կողմէ Արցախի վրայ սանձազերծած պատերազմին եւ կ'ըսէ. «ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը պետք է պահանջէ, որ Ազդեցական դադարեցնէ բոլոր յարձակողական գործողութիւնները Արցախի Հանրապետութեան վրայ եւ կրակի դադարեցնման հրաման տայ»:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ...

Շարունակում Ա. Էջև

Ֆրանսերէն եւ անգլերէն: Այս խօսքին ընդմէջէն լիբանանահայ երիտասարդական եւ ուսանողական միութիւնները դատապարտեցին Ազդեցականի անիրաւ եւ միջազգային օրէնքներու դէմ գործած արարքները, նաեւ կոչ ուղղեցին ՄԱԿ-ին, որ իր կարգին դատապարտէ այս դրժումները եւ ճանձնայ Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը:

Բողոքի ասարտին մասնակիցներու անունով բողոքագիր փոխանցուեցաւ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ներկայացուցիչին: Մասնակիցները նաեւ ներկայացուցիչին եւ տեղական լրատուամիջոցներուն յանձնեցին խտասալիկներ, որոնք կը բովանդակէին Արցախեան հարցին մասին պատմական տեղեկութիւններ, ինչպէս նաեւ 27 սեպտեմբերէն սկսեալ Ազդեցականի կողմէ մարդու իրաւունքներու խախտումներու վերաբերող մանրամասնութիւններ:



ԹՐԱՄՓ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԴԱՐԱԲԱՂԵԱՆ...

Շարունակում Ա. Էջև

մասին, մենք կը խօսինք Հայաստանի հետ: Մենք շատ լաւ յարաբերութիւններ ունինք Հայաստանի հետ: Այնտեղ շատ լաւ մարդիկ կ'ապրին: Ծատ նպատակաւաջ, նուիրուած մարդիկ են: Տեսնեցէ, թէ ի՞նչ պիտի ըլլայ: Այս երկրին մէջ կ'ապրին մեծաթիւ հայեր, անոնք շատ լաւ մարդիկ են, եւ մենք պիտի օգնենք անոնց», ըսած է Թրամփ:

Այն հարցումին, թէ արդեօք հաղորդակցութիւն ունեցա՞ծ է Հայաստանի կամ Ազդեցականի ղեկավարներուն հետ՝ Թրամփ պատասխանած է. «Զմեռ ուզեր խօսիլ»:

ՓՈՍՓՈ Կ'ԸՆԴՐՈՎԷ ԵԱՀԿ-Ի ՄԻՆՍԿԻ ԽՍՏԱԿԻ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԵՆՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփոէ երէկ Ուաշինկթընի մէջ Հայաստանի եւ Ազդեցականի արտաքին գործոց նախարարներ Չոիրայ Մնացականեանի եւ Ծեյիուն Պայրամովի հետ հանդիպումներուն ընթացքին ընդգծած է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբակի ծիրին մէջ դարաբարեան տաճկապի լուծման կարեւորութիւնը, ինչպէս նաեւ կոչ ուղղած է՝ դադարեցնելու բռնութիւնը եւ պաշտպանելու քաղաքացիները: Այս մասին կը հարդորէ ԹԱՍՍ-ը՝ յղում կատարելով Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան:

Կը նշուի, որ երկու դիւանագետներու հետ Փոմփոէյի հանդիպումները կայացած են առանձին:

«Արտաքին գործոց նախարար Փոմփոէ ընդգծած է բռնութիւնը դադարեցնելու եւ քաղաքացիները պաշտպանելու անհրաժեշտութիւնը: Արտաքին գործոց նախարարը նաեւ կարեւոր նկատած է, որ կողմերը սկսին բանակցութիւններու՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբակի համահաշակառութեան աջակցութեամբ՝ Յէտիլեքեան եզրափակիչ ինքնազգրի մէջ շարադրուած սկզբունքներու հիման վրայ՝ ուժի չկիրարկում եւ ուժի սպառնալիքի բացակայութիւն, տարածքային ամբողջականութիւն, ժողովուրդներու իրաւահաստատութիւն եւ ինքնորոշում», ըսուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

ՆԱԽԱՐԱՅ ԶՈՐԴՈՒ ՄԱՍՍԱԿՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՄ ՄԱՅՑ ՓՈՍՓՈՅԻՆ ԴՅԵ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանքեր Աննա Նաղդալեան կը տեղեկացնէ, որ նախարար Մնացականեանի եւ Մայք Փոմփոէյի քննարկման առանցքն էր Արցախի մէջ ազդեցականական լայնածաւալ յարձակումներու իրենց հետեւանք ստեղծուած իրավիճակը: Նախարար Մնացականեան Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին տեղեկացուց Ազդեցականի զինուած ուժերուն կողմէ մարտական գործողութիւններու ընթացքին իրականացուող պատերազմական յանցագործութիւններու մասին, որոնք կը դըր-

սերուրին Արցախի քաղաքացիական բնակչութեան եւ ենթակառուցուածքներու դիտարեալ թիրախաւորումով, քաղաքացիական բնակչութեան եւ ռազմագերիներու նկատմամբ նուաստացուցիչ վերաբերմունքով, գլխատուներով եւ սպանութեամբ:

Նախարար Փոմփոէն ամերիկեան կողմին ցաւակցութիւնը յայտնած է գոհերուն համար:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը ընդգծեց նաեւ, որ ազդեցականական կողմի այս յարձակումը տեղի կ'ունենայ Թուրքիոյ ուղղակի ներգրաւումով, որ կ'արտայայտուի անվտակական զինուորական արհեստագիտական աջակցութեամբ՝ վերջինս կողմէ տարածաշրջան զինեալ ահաբեկիչներու ներմուծումով: Նախարար Մնացականեանի համաձայն, Ազդեցականի Թուրքիոյ ազդեցական գոտի եւ միջազգային ահաբեկչութեան դառնալու որոշումը լուրջ սպառնալիք է շըրջանային անվտակական համար:

Նախարար Մնացականեան նշեց, որ Ազդեցականի կողմէ զինադադարի վերաբերեալ համաձայնութիւններու խախտումը եւ Արցախի ժողովուրդին դէմ ռազմական գործողութիւններու շարունակութիւնը անգամ մը են կը փաստեն տազնապիս ռազմական ճամբով լուծելու Ազդեցականի նպատակը:

Երկուստեք վերահաստատուեցաւ Լեռնային Ղարաբաղի տազնապի գոտիին մէջ կրակի անպաւղ դադարեցման շուրջ ձեռք բերուած պայմանադրութեան կատարման, ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբակի համահաշակառութեան ծիրին մէջ խարդող գործողութեան շարունակելու անհրաժեշտութիւնը:

ԹՈՒՐԵՒՈՑ ՄԵԶ...

Շարունակում Ա. Էջև



Լրատուամիջոցը նկատել տուաւ, որ Կարո Փայլան եւս Թուրքիոյ մէջ թիրախ դարձած է՝ ազդեցականական-արցախեան տազնապի գոտիին մէջ զինադադարին կողմնակից ըլլալուն եւ խաղաղութեան կոչ ուղղելուն համար:

Փայլան նշեց, որ Թուրքիոյ մէջ կ'ապրին տարբեր ինքնութիւններ, տարբեր հաստեղ եւ համոզում ունեցող քաղաքացիներ: «Սակայն ներկայի վարչակազմը, ցաւ ի սիրոյ, կը շարունակէ վարել իր ազգայնական, ցեղորոշական եւ կոմունական ուղղաձուգութիւն ունեցող քաղաքականութիւնը», շեշտեց Փայլան:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ...»

Շարունակում Ա. Էջև

առաջադրած բարեկարգումի ծրագիրը. այսօր վարչապետին մօտ շօշափեցինք անոր կատարել պատրաստակամութիւնը, բաց խորհրդակցելու իրականութիւնը եւ բոլորին գործակցութեան ձեռք երկարելու տրամադրութիւնը՝ կազմելու նոր կառավարութիւնը, ինչպէս նաեւ բոլորին հետ երկխօսութիւն կատարելու:

«Այս դիտանկիւնէն մեկնելով կրնանք հաստատել, որ լատատեսութիւն կը տիրէ՝ կառավարութիւն կազմելու իմաստով:

«Զենք փափաքիր կառավարութեան տեսակին մասին խօսիլ, սակայն մեզի համար այս փուլին կառավարութեան անուանումը պետք է ըլլայ փրկութեան կառավարութիւնը:

«Այն, թէ այդ կառավարութիւնը մասնագետներու կամ քաղաքական անձնակազմով կառավարութիւն ըլլալ կամ երկու տեսակը կը ներառէ՝ երկրորդական է: Առաջնադաս կառավարութեան կազմութիւնն է՝ կառավարութիւն մը, որ կարենայ իրագործել ժողովուրդին կարիքները, երիտասարդներուն ձգտումները, եւ մենք՝ իբրեւ Հայկական Երեսփոխանական պլոք եւ Հայ լեզափոխական դաշնակցութիւն, պատրաստակամութեան յայտնեցինք նոր կազմութիւն կառավարութեան մէջ պատասխանատուութիւն ստանձնելու», ըսաւ ան:

ՔԱՐԻՆ...

Շարունակում 3-րդ էջէն

Շուշին ազատագրուած է: Այլեւս կարելի է մօտենայ Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր՝ Արամ Մանուկեանի յաճախած թեմական դպրոցին պատին. լեռան եզերքէ վար Նայելով կարելի է երեւակայել ծորին խորը ծուրաբձ Քարին Տակ գիւղին հերոսական դիմարդութիւնը ազդեցականական ծակումներուն. կարելի է նաեւ վերադառնալ Ա. Ամենափրկիչ եկեղեցի եւ իսկապօղ Ս. պատարագի կշռոյթով խորհրդածով ազատութեան եւ անհատական ու հաշտութեան արժանապատիւ վերապրումի մասին:

Բայց եկեք բարձրանանք քարին վրայ, դէպի Շուշի ամենաբարձր կետը, ուր կանգնած է հեռուստա-ցոյցի հեռարձակումի աշտարակը, մագլցինք ժայռերէ վեր եւ դիմե՛ք չորս ուղղութիւններուն:

Դէպի արեւմուտք Չանգեղարի եւ Գեղամայ լեռներն են՝ Արարատի թիկնապահները:

Դէպի արեւելք՝ Պաքու տանող դաշտավայրերը եւ Կասպից ծովու նաւթահորերը:

Դէպի հիւսիս պիտի տեսնենք մշուշին մէջ ուր-ազծուող Էլպրուզ գազաթը. Արարատէն աւելի բարձր այս լեռը նստած է Ռուսիոյ հարաւային սահմանին:

Դէպի Իրան՝ հազիւ թէ երեւոյղ լեռնաշղթան կը կոչուի Ալպորդ. ան կ'եզերէ Կասպից ծովուն հարաւը, անոր համալեւտ գազաթը եւս Արարատէն բարձր է:

Երկու ուղիք լեռները, Արարատէն եւ հայկական լեռնաշղթան կը գրկեն Կովկասը. տարածաշրջանը կը յենի երեք գագաթներու, ռազմաքաղաքական երեք տարբեր սիւներու վրայ: Շուշին կը գտնուի այդ բեռներուն ուժային հաւասարակշռութեան խաչմերուկին վրայ: Հայոց քարին կշիռը ծանր է:

Շուշին եւ ազատագրուած տարածքը կը ներկայանան իբրեւ հայ ազգային ռազմավարութեան հիմքը եւ հայոց քաղաքական կամքին բենը: Այս իրողութիւնը հայութեան համար պիտի ունենայ բացառական արժէք:

2016 ապրիլի քառօրեայ պատերազմէն տեղ աշխուժացան միջամտութիւնները, եւ բազմաթիւ ճշմաները ի խնդիր Հայաստանի կողմէ դիրքային զինուածներու՝ ընդդէմ Արցախի կարգապահական մասին աղօստ նշումներու: Կամայ թէ ակամայ, սկսած է արժեւորուել Ազդեցականի շրջապագերծած մաշումի պատերազմէն ծնած գործունէութիւնը՝ մտայնութիւն մը, որ կեղծ իրատեսութեան քողին տակ կը փորձէ փորել հայոց քաղաքական կամքին հիմքը, քար առ քար: Հաստատուեց նաեւ, որ հայերը եւ Հայաստան կը դիմագրաւեն կենսական նշանակութիւն ունեցող այլ մարտահրաւեր մը՝ արտաքին ճշմաներէն եւ անհատական թէ խմբակային շահերէն բխող պարտաւորական մօտեցումներուն բացայայտումը եւ յաղթահարումը:

Պետք է թթափել ընթացիկ կեանքի թթիւը: Անհրաժեշտ է անդրադառնալ, որ տարածաշրջանին տիրող հակամարտութիւններուն ենթահողը եւ մեկնակետը այն յեղեղուկ իրավիճակն է, որ յառաջացաւ Ա. Աշխարհամարտէն տեղափոխութի